

ընթերցողներէն ոմանք երբեմն կը յարուցանեն զայն, ինչպէս Մխ. Գոշ՝ ըսելով « յաւուրս ագապից » (Խր. Պար.), կամ Տաթեւացին՝ «ագապս մատաղաց», զոր եւ կը զատէ տեառնականէն եւ ոգեհանգրստէն (Հրց. 362) զորս պիտի տեսնենք: — Զանազանութիւն մը կը նշմարուի, գոնէ Զ դարուն, ագապին ու պատարագին մէջ եւս. զանազանութիւն մը նպատակի, եթէ ոչ արարողական հանգամանաց: Զայս կը գտնենք Աշտարակեցւոյն կանոնաց մէջ, երբ կը խօսի քահանայից տրուելի բաժնին վրայ: Հոն ագապն է բուն իսկ ուղորմութեան ճաշը, որ կարօտելոց միայն կը տրուի. անոր համար քահանայք, կ'ըսէ, «յագապս մասունս մի՛ բարձցեն ըստ հրամանի կանոնաց, այլ աղբատաց տացն ի նմին (օրհնելու) ժամու յանդիման ագապատեառնն» (ԻԳ). մինչդեռ «պատարագին» վրայ խօսելով, կը սահմանէ եկեղեցականաց բաժինը (ԻԹ). զի վերջինս ամենուն խառն կը տրուէր ըստ Մանգակունւոյն (59):

2. — Ծագումն: — Յունաստան եւ Իտալիա ունէին ի հնուց այդպիսի հասարակաց ճաշեր՝ կրօնական պաշտամանց առթիւ (Գար. Բ, 736-8), հանրային բարձերու թիկնածուաց, յաղթողաց, ճոխ ժա-